

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

HEALTH AND OCCUPATIONAL SAFETY ISSUES  
IN THE FIELD OF AGRICULTURE



**Հայաստանի Հանրապետության  
Ագրոարդյունաբերական Համակարգի Աշխատողների  
Արհեստակցական Կազմակերպությունների Ճյուղային  
Հանրապետական Միություն**

**Branch Republican Trade Union  
Organizations of Workers of Agro industrial  
Division of Republic of Armenia**

**Ք. Երևան 10, Վ. Սարգսյան 26/3 Միությունների փուն, Yerevan, 26/3 V. Sargsyan str.26/3, House of Unions,  
Հեռ.:/Tel. (+37410) 52 04 00  
Email: profagro@mail.ru, www.profagro.am**



**International Labour Office  
Bureau International du Travail  
Oficina Internacional del Trabajo**

**Route des Morillons 4  
CH-1211 Geneve 22**

**CONDUCTED WITH FINANCIAL AND  
TECHNICAL SUPPORT OF  
INTERNATIONAL LABOUR ORGANIZATION.**

**Երևան 2023թ.**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Փորձագետներ՝

Արամ Միքայելյան - քիմիական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, թունաքիմիկատների  
որակի վերահսկման գծով մասնագետ

Արտաշես Նազարեթյան - քիմիական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, էկոլոգ

Նարեկ Ներսիսյան - փաստաբան, աշխատանքային  
իրավունքի մասնագետ

# **Բովանդակություն**

<b>1. Ներածական մաս</b> .....	2
1.1. Ընդհանուր տեղեկատվություն.....	3
1.2. Աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների հիմնախնդիրները գործող օրենսդրության առկա իրավիճակը .....	5
<b>2. Գյուղատնտեսական թունաքիմիկատների օգտագործման ռիսկերը և դրանց կառավարումը</b> .....	11
2.1. Աշխատանքի անվտանգության հիմնախնդիրները ագրոքիմիկատների օգտագործման ժամանակ.....	11
2.2. ՀՀ գրանցված և օգտագործման թույլատրված թունաքիմիկատների (պեստիցիդների) դասակարգումը ըստ վտանգավորության.....	12
2.3. Գյուղատնտեսական արտադրություններում թունաքիմիկատների հասանելիության շղթաներում բացահայտված ռիսկերի վերլուծություն, դրանց ազդեցությունը ոլորտի օգտագործողի առողջության վրա.....	13
2.4. ՎՀԿ նախատեսված թունաքիմիկատների, բուսական և այլ բնական ծագման ակտիվ բաղադրիչների կարգավորվումները.....	16
<b>3. Առաջարկվող լուծումներ</b> .....	19

## 1. Ներածական մաս

Ստորև ներկայացվող ուսումնասիրությունը իրականացվել է 2023 թ-ի փետրվար - մայիս ամիսների ընթացքում՝ ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության փորձագետների կողմից՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել /վեր հանել/ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի անվտանգության, թունաքիմիկատներ օգտագործելու դեպքում առողջ և անվտանգ պայմանների ապահովման հիմնախնդիրները, սննդամթերքի անվտանգությանը և գյուղաշխատողների առողջությանը հասցվող վնասները: Գյուղատնտեսական արտադրություններում թունաքիմիկատների հասանելիության շղթաներում բացահայտված ռիսկերի վերլուծության միջոցով ներկայացնել դրանց ազդեցությունը ոլորտային օգտագործողի և հանրային առողջության վրա:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել օգտագործվող թունաքիմիկատների վտանգավորությանը և ներկայացվել է ճանապարհային քարտեզ վեր հանված խնդիրների լուծման առաջարկներով:

Ուսումնասիրությունն իրականացվել է որակական ուսումնասիրության մեթոդով: Խորքային և համապարփակ ուսումնասիրվել են միջազգային և ներպետական օրենսդրությունը և պրակտիկան:

Օգտագործված հապավումներ՝

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ԱՄԿ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն

ԱՄ՝ Արհեստակցական միություն

ԱՕ՝ Աշխատանքային օրենսգիրք

ՀԱՄԿ՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Ագրո ՃՀՄ՝ Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն

ԵՄ՝ Եվրոպական միություն

ԱՀԿ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Միավորված ազգերի կազմակերպությանը պատկանող միջկառավարական կազմակերպություն (WHO)

ՊԳԿ՝ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Միավորված ազգերի կազմակերպությանը պատկանող միջկառավարական կազմակերպություն (FAO)

ՍԱՏՄ՝ Սննդի անվտանգության տեսչական մարմին

ԱԱՏՄ՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին  
ԱՊՄ՝ անհատական պաշտպանության միջոցներ (PPE)  
ՎՀԿ՝ վնասատուների համակարգված կառավարում (IPM, Integrated pest management)

ՎՊԱԾ՝ վնասատուների դեմ պայքարի ազգային ծրագիր (PMP)

Հիմնական հասկացությունները

- Պեստիցիդ (Թունաքիմիկատներ)՝ բույսերի պաշտպանության միջոց, ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է որոշակի վնասատուների (ներառյալ մարդկանց և կենդանիների հիվանդություններ փոխանցողների, սննդամթերքի, գյուղատնտեսական արտադրանքի, փայտանյութի, կենդանիների կերերի արտադրության, վերամշակման, փոխադրման, իրացման գործընթացներին խանգարող և խոչընդոտող վնասատուների), բույսերի և սնկերի անցանկալի տեսակների կանխարգելման, ոչնչացման կամ պայքարի համար: Պեստիցիդների խմբում ներառված են միջատասպանները (ինսեկտիցիդներ), կրծողների դեմ պայքարի միջոցները (ռոտենդիցիդներ), սնկասպանները (ֆունգիցիդներ), մոլախոտերի դեմ պայքարի համար նախատեսված նյութերը (հերբիցիդներ), բույսերի աճի կարգավորիչները, ֆերոմոնները, դեֆոլիանտները, դեսիկանտները և ֆումիգանտները:

- Ագրոքիմիկատներ՝ պարարտանյութեր, քիմիական հողաբարելավիչներ, որոնք նախատեսված են բույսերի սնուցման, հողերի բերրիության բարելավման համար.

### 1.1. Ընդհանուր տեղեկատվություն

*Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական կառավարմամբ պետություն է:*

Տարածքը՝ 29 743 կմ<sup>2</sup>. Ծովի մակարդակից միջին բարձրությունը 1800 մ է:

ՀՀ տարածքը բաժանված է տասը մարզի և Երևան քաղաքի,

Բնակչությունը՝ 2 986 100 մարդ, որից՝ 47.7% տղամարդիք, 52.3%՝ կանայք,

Քաղաքային բնակչությունը 1901.4 հազ. մարդ - 63.7 %,

Գյուղականը 1084.7 հազ. մարդ - 36.3 % (2017 թվականի բնակչության հաշվառման տվյալներով). Գյուղական և քաղաքային բնակավայրերի ընդհանուր թիվը մոտ 793 է (բնակավայրեր՝ 1002):

*Հայաստանում հանդիպում է անոթային ծաղկավոր բույսերի շուրջ 3600 տեսակ: Հայաստանի կենսաբազմազանությունը հատկապես հարուստ է տնտեսապես արժեքավոր, հազվագյուտ և էնդեմիկ տեսակներով:*

Կովկասի բուսաբուսականների կեսից ավելին աճում է Հայաստանում, որը զբաղեցնում է ամբողջ տարածքի 6,7%-ը:



### Գյուղատնտեսությունը Հայաստանում

Գյուղատնտեսության ոլորտը շատ կարևոր դեր է խաղում տարածաշրջանի բազմաթիվ երկրների տնտեսություններում, և Հայաստանը բացառությունն է: Այն տնտեսության զարգացման, զբաղվածության և գյուղական բնակչության համար ապրուստի կարևորագույն ոլորտներից է:

Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում կազմում է մոտ 31%: Գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են

հողային ֆոնդի մոտ 54%-ը: Մշակվող հիմնական կուլտուրաներն են՝ բանջարեղենը, կարտոֆիլը, ցորենը, խաղողը, մրգերը ծխախոտը: Առանձին տեղ է գրավում անասնա-բուծությունը:

Հայաստանի տնտեսությունն առանձնացնում է 5 հիմնական գյուղատնտեսական մարզեր՝ Արարատ, Արմավիր, Տավուշ, Սյունիք, Վայոց Ձոր:

1990-ականներին Հայաստանն իրականացրել է նախկին Խորհրդային Միության տարածքում հողային բարեփոխումների ամենաընդգրկուն ծրագրերից մեկը: Արդյունքում ստեղծվեցին մոտ 340,000 մասնավոր ֆերմաներ, բայց նրանք չունեին համապատասխան մեքենաներ և սարքավորումներ, ոռոգման ջուր և լավագույն փորձի իմացություն [1]:

Գյուղատնտեսությունը դարձել է երկրի տնտեսական աճի հիմնական շարժիչներից մեկը: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտը դեռևս կարևոր է երկրի տնտեսության համար: Այն գյուղական բնակավայրերի տնտեսական ակտիվության հիմնական աղբյուրն է:

Գյուղատնտեսությունում (ներառյալ անտառտնտեսությունը և ձկնորսությունը) զբաղված է աշխատունակ բնակչության մոտ 31.3%-ը (2018թ.), որոնցից գրեթե 56%-ը կին ֆերմերներ են: Գյուղատնտեսության մեջ ոչ ֆորմալ զբաղվածությունը գնահատվում է զգալի:

Հայաստանում հիմնական մշակաբույսերն են՝ հացահատիկային և հատիկալընդեղենը, արդյունաբերական կուլտուրաները, կարտոֆիլը,

բանջարեղենը, ձմերուկը, կերային կուլտուրաները, պտղապտուղների և հատապտուղների տնկարկները, խաղողի ցանքատարածությունները:

*2020 թվականի պատերազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանի ողջ երկայնքով սրեղծվել է գյուղաշխատողների կյանքի անվտանգությանը սպառնող իրավիճակ: Այս իրավիճակը հանգեցրել է միգրացիոն ակտիվ գործընթացների, արտագաղթի գյուղական համայնքներից: Փակվել են անասնապահական ֆերմաներ, արտավայրերի փարածքային կորստի և ոչ անվտանգ լինելու հետևանքով, ինչպես նաև անհնար է դարձել հացահատիկային մշակաբույսերի համար նախատեսված հողատարածքների օգտագործումը:*

1.2. Աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների հիմնախնդիրները գործող օրենսդրության առկա իրավիճակը:

Աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններին վերաբերող օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական իրավական ակտերով: Առաջին և հիմնական կարգավորող օրենքը Աշխատանքային օրենսգիրքն է (ԱՕ): Աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլուխը կարգավորում է աշխատողների առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովումը: ԱՕ-ն մասնավորապես սահմանում է աշխատողների անվտանգ աշխատանքի իրավունքը և նշվածից ածանցվող՝ աշխատանքի նորմալ պայմանների ապահովման պարտականությունը գործատուի կողմից, աշխատավայրի համապատասխան կահավորումը, աշխատանքի միջոցները և օգտագործման կարգը, արտադրական գործընթացի ժամանակ վտանգավոր քիմիական նյութերի ազդեցությունից պաշտպանության, հրահանգավորման, օգտագործման կարգը, պարտադիր բժշկական զննությունը, սանիտարահիգիենիան, պաշտպանության միջոցների ապահովումը, բուժօգնության կազմակերպումը, որոշակի կատեգորիայի աշխատողների իրավունքների երաշխիքը, ինչպես նաև դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների քննության կարգի մասին դրույթներ:

Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել ԱՄԿ 155-րդ կոնվենցիան, ԱՕ-ի կարգավորումներով Հայաստանի Հանրապետությունը հիմնականում հանձն է առել կոնվենցիայում նշված հիմնարար պարտավորությունները և ամրագրել դրանք օրենսդրորեն: Ավելին՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են մի շարք այլ օրենքներ, որոնք այս կամ այլ կերպ կարգավորում են աշխատանքի անվտանգությունը: Այդպիսի իրավական ակտերից են՝ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»,

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», ՀՀ օրենքները և դրանց հիման վրա ենթաօրենսդրական իրավական ակտեր (կառավարության որոշումներ, առողջապահության նախարարի հրամաններ և այլն), որոնք ապահովում են ԱՕ-ի գործողությունները և կիրարկումը:

Սակայն վերը նշված իրավական ակտերը ընդհանուր կարգավորումներ են և դրանց վերլուծությունը թույլ է տալիս գալ եզրահանգման, որ դրանք չեն կարգավորում որոշակի ոլորտներում յուրահատկություններ ունեցող աշխատանքային հարաբերություններում աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններ: ՀՀ-ում այդպիսի ոլորտներից է գյուղատնտեսությունը: ՀՀ-ում գյուղատնտեսությունը որպես տնտեսության առանձին գործունեության ճյուղային քաղաքականության մշակումը, գյուղատնտեսության ոլորտը կարգավորող պետական գերատեսչական մարմնի բացակայության պայմաններում, դրված է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության վրա: Պետական առանձին քաղաքականության բացակայությունը իրավական տեսանկյունից հանգեցրել է մի իրավիճակի, որտեղ գյուղացու դերը որպես իրավունքի սուբյեկտ, բացակայում է: Գյուղացու աշխատանքը, ֆորմալ, թե ոչ ֆորմալ, չի կարգավորվում: Գյուղացու աշխատանքի անվտանգությունը կարգավորվում են անուղղակի և հարակից իրավական ակտերով, որոնք ըստ էության, աշխատանքային իրավունքի նորմեր չեն: Հիմնական իրավական ակտերը վերաբերում են սննդամթերքի անվտանգության ապահովմանը և չեն կարգավորում գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի անվտանգությունը: Սննդամթերքի անվտանգության ոլորտը կարգավորվում է «Սննդամթերքի անվտանգության մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Կերի մասին», «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Ստանդարտացման մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Առևտրի և ծառայությունների մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, այլ օրենքներով և շուրջ 100 ենթաօրենսդրական իրավական ակտերով: ԵԱՏՄ կանոնակարգերը նույնպես չեն կարգավորում գյուղացու կարավիճակը և աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններ:

2019թ.-ին ԱՕ-ում կատարվել են փոփոխություններ, որոնցով պետական տեսչական մարմինը լիազույթյուն է ստացել իրականացնել գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը: Բայց այս մարմինը նույնպես գյուղատնտեսության ոլորտում աշխատանքային պայմանները, անվտանգությունը ստուգելու թե՛ իրավական լիազորություն, թե՛ տեխնիկական հնարավորություն և միջոցներ չունի:

ԱՄԿ-ի 2020թ.-ի «Սոցիալական պաշտպանության համակարգերի կառուցվածքը՝ միջազգային նորմեր և մարդու իրավունքներին վերաբերող փաստաթղթեր» հրապարակման մեջ, որպես ավելի արդիական միջազգային փաստաթղթեր, որոնք ներառում են նորմեր և վերաբերում են մարդու իրավունքներին և նպաստում սոցիալական ապահովության իրավունքի, սոցիալական պաշտպանության արդյունավետ համակարգերի ստեղծմանը նշվել են ԱՄԿ 102-րդ, 118-րդ, 121-րդ, 128-րդ, 130-րդ, 157-րդ, 168-րդ, 183-րդ կոնվենցիաները: Հարկ է նշել, որ ՀՀ-ն վերը նշված կոնվենցիաներին չի միացել: Այս համատեքստում կարևորում ենք, որ սոցիալական և աշխատանքային հարաբերությունների շրջանակներում առանձնահատուկ նշանակություն ունեն աշխատանքային գործունեության որակական և քանակական բնութագրերը: Դրանց թվում են ինչպես աշխատողի սոցիալական ապահովության աստիճանը, այնպես էլ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանները, որոնք մեր կարծիքով կազմում են աշխատանքի սոցիալական անվտանգության համակարգը:

ՀՀ-ն որպես սահմանադրորեն սոցիալական հոչակված պետություն, ամբողջությամբ չի ապահովում սոցիալական անվտանգության իրավական բաղադրիչները: Կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ նախատեսվում է՝ «Գյուղատնտեսության ոլորտում Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արտադրողականության բարձրացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար ու արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը, անասնաբուծության և բուսաբուծության զարգացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրված արտադրանքի իրացմանն ու արտահանման խթանմանը, գյուղատնտեսական ամբողջ արժեչթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերք վերամշակողների

եկամուտների ավելացմանը»: Այս որոշման շրջանակներում պետական քաղաքականության իրականացման ճանապարհին, խիստ անհրաժեշտ է դառնում՝ ԱՄԿ 184-րդ և 129-րդ կոնվենցիաների վավերացումները ՀՀ կողմից, ավելին՝ անհրաժեշտություն է առաջանում քննարկել ԱՄԿ 170-րդ, 171-րդ և 177-րդ կոնվենցիաներին միանալու հարցը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Նշվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից 129-րդ, 184-րդ և 155-րդ ԱՄԿ կոնվենցիաները վավերացնելու դեպքում նախ դրանք դառնում են ներպետական օրենսդրության մաս և երկրորդ՝ դրանց ներքին օրենսդրությունը համապատասխանեցնելու խնդիր է առաջանում: Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը այսպիսի պայմաններից ելնելով պարտավորություն կստանձնի աշխատանքի անվտանգության և հիգիենայի նորմերը բերել միջազգային ստանդարտների և ընդունել համապատասխան իրավական ակտեր, գյուղատնտեսության ոլրտի աշխատողների անվտանգության և հիգիենայի խնդիրներն էլ լուծել՝ ըստ միջազգային պարտավորությունների:

Նախ և առաջ վերը նշված կոնվենցիաների գործարկման կիրարկումը ապահովելու անհրաժեշտ է ներպետական օրենսդրությամբ ամրապնդել գյուղացու և նրա աշխատանքի կարգավիճակը:

Անհրաժեշտություն է առաջանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարելը, որոնք կսահմանեն՝

1. Քաղաքացիների իրավունքը գյուղատնտեսության ոլորտում զբաղվել արտադրական կամ այլ տնտեսական գործունեությամբ առանց իրավաբանական անձ ձևավորելու գյուղացիական տնտեսություն ստեղծելու միջոցով:

2. Գյուղացու կարգավիճակը՝ գյուղատնտեսության ոլորտում համատեղ գործունեություն ծավալելու, գյուղացիական տնտեսություն հիմնելու, իրավաբանական անձ ստեղծելու կամ այլ ֆորմալ կարգավիճակ, որը կորոշի գյուղացու աշխատանքը և դրանից բխող հարաբերությունները:

3. Գյուղացիական տնտեսությունների կարգավիճակը, սեփականության տեսակների յուրահատկությունը, դրանց օգտագործման տիրապետման հնարավորությունը աշխատանքներ կատարելիս, պատասխանատվության և պարտավորությունների չափը:

4. Աշխատանքային շահերի և իրավունքների հետ փոխկապված հանգստի, անվտանգության, հիգիենայի և այլ դրույթներ:

Երկրորդ տարբերակը «Գյուղացու, գյուղի և սննդամթերքի, սննդի արտադրության» մասին առանձին օրենսդրության մշակումն է:

Ավելի համապարփակ լուծում տալու նպատակով անհրաժեշտ է Ա՛ փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, Ա՛ ընդունել առանձին օրենսդրություն. այստեղ գլխավորը գյուղացուն օրենքի տեսանկյունից սուբյեկտավորելն է:

ԱՕ-ի 262-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է տեսչական մարմինը»:

ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 444-Ն որոշման համաձայն՝ ստեղծվել է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ մասով և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը 2018 թվականի հունիսի 11-ին վերակազմավորվել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, որի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշմամբ: ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 3-ի թիվ 768-Լ որոշմամբ՝ Կանոնադրության մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ: ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշմամբ՝ ԱԱՏՄ համար սահմանվել է 280 հաստիքային միավոր: Կանոնադրական գործառույթների ավելացման արդյունքում՝ ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 808-Ա որոշմամբ, ԱԱՏՄ համար սահմանվել է 340 հաստիքային միավոր՝ ավելանալով 60-ով:

**ԱԱՏՄ նպատակն է՝** օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

**ԱԱՏՄ խնդիրներն են՝** բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ

վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը նշված ոլորտներում:

ԱԱՏՄ-ն կազմված է հիմնական մասնագիտական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից, որոնք տեղաբաշխված են ՀՀ ողջ տարածքում (<https://www.hlib.am/introduction/>)

### **Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ՝**

- Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն.
- Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն.
- Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն.
- Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն.
- Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն.
- Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին.
- Որակի ապահովման վարչություն.
- Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն:

Վերը նշված իրավական ակտերի համադրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ աշխատանքի անվտանգության հիգիենայի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի գործունեությունը իրականացվում է ընդհանրական կարգավորումներ սահմանող օրենսդրությամբ: Մինչդեռ գյուղատնտեսության ոլորտը առանձին կարգավորման խնդիր ունի:

Հաշվի առնելով, որ գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի անվտանգությունը սերտորեն կապված է նաև ագրոքիմիկատների օգտագործման հետ, անհրաժեշտ է վերանայել ագրոքիմիկատների և թունաքիմիկատների ներկրումը և օգտագործումը կարգավորող օրենսդրությունը և համադրել աշխատանքի անվտանգության, առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովող օրենսդրական ակտերի հետ: Անհրաժեշտ է սահմանել գյուղացու կարգավիճակը կանոնակարգող նորմեր, ստեղծել պայմաններ գյուղացուն ֆորմալ աշխատանքային դաշտ բերելու ուղղությամբ, ընդունել տեսչության մասին առանձին օրենսդրություն, որի նպատակը և խնդիրները կլինեն ստեղծել միայն առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր

պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը, այդ թվում աշխատանքի անվտանգությունը և հիգիենան գյուղացիական զբաղվածության բնագավառում:

## **2. Գյուղատնտեսական թունաքիմիկատների օգտագործման ռիսկերը և դրանց կառավարումը**

2.1. Աշխատանքի անվտանգության հիմնախնդիրները ագրոքիմիկատների օգտագործման ժամանակ

Պարենամթերքի համաշխարհային պահանջարկի աճի հետ համընթաց, աճում են նաև գյուղատնտեսության մեջ կիրառվող թունաքիմիկատների ծավալները: Դրա հետ մեկտեղ հաճախ ներկրված բազմատոննաժ ագրոքիմիկատների անվտանգ պահպանման պայմանների բացակայությունը, ինչպես նաև կուտակվող ժամկետանց և հնացած (*obsolete*) թունաքիմիկատների աճող քանակությունը, պոտենցիալ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Դրանց վերաօգտագործման և վնասագերծման խնդիրները առ այսօր գործնականորեն ամբողջությամբ լուծված չեն:

Այսօր գյուղատնտեսության մեջ օգտագործվում են հազարից ավելի քիմիական միացություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խմբերը՝

- Պեստիցիդներ /լատիներենից թարգմանությամբ նշանակում է վարակասպան/, սրանք նյութերի խումբ են, որոնք օգտագործվում են բույսերի վնասատուների, հիվանդությունների և մոլախտոտների ոչնչացման համար:

Կախված այն բանից, թե որ օրգամիզմների դեմ են դրանք պայաքարում, պեստիցիդները իրենց հերթին բաժանվում են տեսակների.

1. Հերբիցիդներ՝ ոչնչացնում են անցանկալի բույսերին, մոլախտոտերին
2. Ինսեկտիցիդներ՝ ոչնչացնում են միջատներին
3. Ակարցիդներ՝ ոչնչացնում են տիզերին
4. Ֆունգիցիդներ՝ ոչնչացնում են սնկերին
5. Բակտերիոցիդներ՝ ոչնչացնում են բակտերիաներին
6. Այլ թիրախային կիրառության տեսակներ

Գյուղատնտեսության մեջ մեծ ծավալներով օգտագործվում են նաև հանքային պարարտանյութեր: Դրանց անզգույշ օգտագործումը կամ համապատասխան մասնագիտական սարք-սարքավորումների, ԱՊՄ (անհատական պաշտպանության միջոցներ) օգտագործման անտեսումը բերում են թունավորումների և քրոնիկական հիվանդությունների: Հանքային պարարտանյութերի չափաքանակների անվերահսկելի

չարաշահումները հանգեցնում են հողի, բնական և արհեստական ջրամբարների, մթնոլորտի աղտոտման, ուստի էկոլոգիական տեսանկյունից էլ առավել նպատակահարմար է օրգանական և կենսաբանական պարարտանյութերի կիրառումը:

2.2. ՀՀ գրանցված և օգտագործման թույլատրված թունաքիմիկատների (պեստիցիդների) դասակարգումը ըստ վտանգավորության.

Համաձայն ՀՀ ՍԱՏՄ տվյալների՝ առ այսօր (2023 թ., մարտ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գյուղատնտեսության մեջ օգտագործման թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում առկա են թվով 2145 պատրաստուկ պեստիցիդներ (այդ թվում հիմնականում ինսեկտիցիդներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ և այլ նշանակության պատրաստուկներ) և 2259 պատրաստուկ ագրոքիմիկատներ [3]:

Բերված անվանացանկում առկա բոլոր պատրաստուկների թունունակությունը մարդու և շրջակա միջավայրի վրա հիմնականում պայմանավորված է պատրաստուկների ակտիվ բաղադրիչի(ների) բնույթով: Համաձայն ՄԱԿ ԱՀԿ-ի ընդունված դասակարգման պեստիցիդային պատրաստուկների ակտիվ բաղադրիչները՝ ըստ թունունակության, դասակարգված են հետևյալ խմբերում [4].

- դաս Ia - Չափազանց վտանգավոր տեխնիկական ակտիվ բաղադրիչներ պարունակող պեստիցիդներ,
- դաս Ib - Բարձր վտանգավոր տեխնիկական ակտիվ բաղադրիչներ պարունակող պեստիցիդներ,
- դաս II - Չափավոր վտանգավոր տեխնիկական ակտիվ բաղադրիչներ պարունակող պեստիցիդներ,

Օգտագործվող յուրաքանչյուր պատրաստուկ, կախված նրանում պարունակվող ազդող նյութի(երի) թունունակության դասից, պահանջում է հատուկ միջազգայնորեն կանոնակարգված նորմեր դրանց պիտակավորման, պահպանման և օգտագործման վերաբերյալ: ԱՀԿ դասակարգումը թունաքիմիկատների տարբեր պատրաստուկային ձևերի վտանգավորության համար ևս հիմնված է ակտիվ բաղադրիչի թունունակության վրա: Տվյալները բերված են ներկայացվող աղյուսակում.

## Աղյուսակ 1.

Դաս	Անվանում	Միջին մահացու չափաքանակի արժեքը, (LD <sub>50</sub> , առնետի համար, Peroral), մգ/կգ մարմնի քաշ		Միջին մահացու չափաքանակի արժեքը, (LD <sub>50</sub> , առնետի համար, Dermal), մգ/կգ մարմնի քաշ	
		Պինդ	Հեղուկ	Պինդ	Հեղուկ
a	Չափազանց վտանգավոր	≤5	≤20	≤10	≤40
b	Բարձր վտանգավոր	5-50	20-200	10-100	40-400
l	Չափավոր վտանգավոր	50-500	20-2000	100-1000	400-4000
ll	Թույլ վտանգավոր	≥501	≥2001	≥1001	≥4001
	Սուր վտանգ չի ներկայացնում	≥2000	≥3000	-	-

Հայաստան ներկրվող և վաճառվող թունաքիմիկատների զգալի մասը արտադրվում են ոչ միայն խոշոր և միջազգային ճանաչում ունեցող ընկերություններում, որոնք ապահովում են որակի ավելի խիստ վերահսկողություն, այլ նաև տարածաշրջանային գրանցում ունեցող ընկերություններում: Որոշ արտադրողների առաջարկած թունաքիմիկատներ պարունակում են ընդհանուր միջազգային կոմերցիոն (ջեներիկ) անունով գրանցված քիմիական ակտիվ դեղաբանական բաղադրիչ(ներ), որոնք լիովին նույնական չեն սկզբնականների հետ, բայց կոչվում են կենսահամարժեք:

Սրանք կարող են պարունակել այլ խառնուրդներ, ունենալ բարձր թունունակություն և հաճախ մատակարարվել առանց համապատասխան լիարժեք տեխնիկական և անվտանգային փաստաթղթերի և անորակ փաթեթավորմամբ:

2.3. Գյուղատնտեսական արտադրություններում թունաքիմիկատների հասանելության շղթաներում բացահայտված ռիսկերի վերլուծություն, դրանց ազդեցությունը ոլորտի օգտագործողի առողջության վրա:

Թունաքիմիկատների ազդեցությունը վտանգ է ներկայացնում դրանք օգտագործող, նրանց շրջապատող մարդկանց, սննդամթերք սպառողների և շրջակա միջավայրի համար:

Նշենք, որ ՀՀ-ում թունաքիմիկատների գրանցումը, ներկրումը, պահեստավորումը, վաճառքը և օգտագործումը կանոնակարգվում է Բուսասանիտարիայի մասին ՀՀ օրենքով [5]՝ Գլուխ 3-րդ, 6, 7, 8 հոդվածներում, իսկ 9-րդ հոդվածում սահմանվում են Պետսիցիդների և ագրոքիմիկատների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջները:

Ընդհանուր առմամբ գործող օրենքն անդրադառնում է ՀՀ տարածքում թունաքիմիկատների շրջանառությանը և անվտանգ օգտագործմանը վերաբերվող բոլոր խնդիրներին:

Թունաքիմիկատների չկանոնակարգված օգտագործման արդյունքում առաջանում են զգալի ռիսկեր, որոնց երկարաժամկետ թունաբանական հետևանքները բերում են մարդկանց առողջության, էկոհամակարգի և շրջակա միջավայրի համար անդառնալի վտանգավոր հետևանքների:

Ֆերմերների մեծ մասը իրազեկված չեն թունաքիմիկատների օգտագործման հետ կապված բնական ռեսուրսների էկոտոքսիկության ու աղտոտվածության հետևանքով ծագած վտանգների մասին: Ջրի և հողի շարունակական աղտոտումը, ինչպես նաև սուր կամ քրոնիկ թունավորումները ոչ թիրախային օրգանիզմների համար, հանգեցնում են էկոհամակարգի կենսագործունեության խաթարման, ինչպիսիք են՝ փոշոտումը կամ բույսերի կենսագործունեության համար անհրաժեշտ միջատների և այլ օրգանիզմների ճնշումը: Թունաքիմիկատները վտանգի աղբյուր են նաև սպառողի համար: Ֆերմերների մեծ մասը լիովին չեն գիտակցում թունաքիմիկատների օգտագործման հետևանքով առաջացող սուր և քրոնիկ առողջական խնդիրների լրջությունը: Հայտնի են հայ ֆերմերների թունաքիմիկատներով թունավորման բազմաթիվ դեպքեր:

Թունաքիմիկատների ազդեցությունը մարդու առողջության վրա նվազագույնի հասցնելու համար, ֆերմերները պետք է օգտագործեն համապատասխան անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ) դրանց հետ աշխատելու բոլոր փուլերում:

Դրանք են՝ մասնագիտական տարատեսակ հագուստ, կոշիկ, ձեռնոցներ, ակնոցներ, շնչադիմակներ կամ այլ պաշտպանական սարքավորումներ և հարմարանքներ: Անհատական պաշտպանության միջոցների կիրառումը պարտադիր կարգով նախատեսվում է անվտանգության տեխնիկայի կանոններով: Գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատները բազմապիսի են և գրեթե բոլորը թունավոր: Դրանք մարդու օրգանիզմի վրա ունենում են ամենատարբեր վնասակար ազդեցություններ: Գործնականում ագրոքիմիկատի

փաթեթավորման պիտակի վրայի տեղեկատվությունը ցույց է տալիս պաշտպանության անհրաժեշտ մակարդակը:

Գյուղատնտեսական աշխատանքներում միջազգային չափանիշներով թույլատրված ԱՊՄ որոշ տեսակներ ներկայացված են ստորև բերված նկարներում [6].



ԱՊՄ բոլոր տեսակների և օգտագործվող սարք-սարքավորումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի են [7]:

Կարևոր է նշել, որ առ այսօր գյուղատնտեսության մեջ օգտագործվում են տրակտորներ, գյուղտեխնիկական սարքավորումներ, որոնք հիմնականում խորհրդային արտադրության են, իրենց սպառել են ֆիազիկապես և բարոյապես, չեն համապատասխանում անվտանգության ապահովման արդի պահանջներին և անհրաժեշ է հնարավորինս կարճ ժամկետներում փոխարինել ժամանակակիցներով: Դա վերաբերում է նաև օգտագործվող բույսերի պաշտպանության մեքենա-սարքավորումներին: Սակայն փոքր ֆերմերները սովորաբար ինքնուրույն կամ տեղային են ցողարկում հողատարածքները, ինչը բարձրացնում է կիրառվող թունաքիմիկատների վտանգավոր ազդեցությունը և նվազեցնում արդյունավետությունը:

Որոշ այգիներ և բանջարեղեն մշակողներ օգտագործում են ձեռքի պոմպային կամ շարժիչով ուսապարկային հեղուկացիրներ՝ 15-ից 20 լիտր տարողությամբ, երբեմն 5-ից 10 լիտրանոց ձեռքի սրսկիչներ: Ջերմոցային տնտեսություններում ֆերմերները օգտագործում են պոմպին կցված մեծ թմբուկային կամ թունաքիմիկատների խառնուրդի տարաններ, միացված ստացիոնար գործող ցողարկման համակարգին: Խոշոր ֆերմերային տնտեսությունները (ցորեն, գարի, կարտոֆիլ և որոշ այգիներ) օգտագործում են փոշեցրիչ և օդային ռեակտիվ սրսկիչներ:

Ֆերմերների մեծամասնությունը թունաքիմիկատներ կիրառելիս ԱՊՄ-ներ չեն օգտագործում և պատշաճ կերպով չեն ստուգում ու չափում հեղուկացիրների նորմալ աշխատանքը, ինչը բերում է չափաբաժինների ծախսի նորմաների էական խախտումների:

Անհրաժեշտ է արձանագրել, որ նույնիսկ Բուսասանիտարիայի մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պատշաճ կազմված փաստաթղթային փաթեթների առկայության դեպքում, ֆերմերների մեծ մասը չի հետևում թունաքիմիկատների օգտագործման հրահանգներին: Հաշվի չեն առնվում պիտակների վրա և անվտանգության թերթիկներում արտացոլված պարտադիր ցուցումները դեղաչափերի առաջարկությունների վերաբերյալ: Որոշ դեպքերում սխալ թունաքիմիկատներ են կիրառվում վնասատուի կամ հիվանդության սխալ նույնականացման պատճառով, և այս բոլոր խնդիրները նվազեցնում են կիրառվող թունաքիմիկատների արդյունավետությունը:

Հաճախ հաշվի չի առնվում հայտնի թունաքիմիկատների նկատմամբ վնասատուների կողմից ձեռքբերվող կայունության մասին տվյալները, հատկապես ջերմոցներում: Անտեսվում են համապատասխան հրահանգները նույն նշանակության բայց տարբեր խմբերի թունաքիմիկատների շրջափոխության կիրառման անհրաժեշտության վերաբերյալ:

Միջին և մանր ֆերմերային տնտեսվարողները հաճախ ձեռք են բերում կիրառվող թունաքիմիկատները տեղային վերավաճառողներից, մարզային փոքր խանութներից: Դրանք վաճառվում են վերափաթեթավորված, փոքր չափաքանակներով և, որպես կանոն, վերատարայավորված ոչ նպատակային տարրոլություններում (սննդային), առանց որևէ պիտակավորման, բանավոր ցուցումներով:

Հաճախ թունաքիմիկատների օգտագործման ժամանակ չի իրականացվում պատշաճ մոնիտորինգ: Շատ ֆերմերներ չեն կողմնորոշվում ինչպես ընտրել ճիշտ թունաքիմիկատները, ճիշտ հաշվարկել և վերահսկել կիրառվող հեղուկացիրների համար անհրաժեշտ աշխատանքային լուծույթների բաղադրությունը և քանակները: Սա հանգեցնում է առաջադրանքի կատարման համար սխալ քիմիական նյութերի ընտրությանը և թունաքիմիկատների մեծ չափանաքակների օգտագործմանը, ինչը բերում է մարդկանց առողջության, ընտանի կենդանիների, վայրի բնության և ոչ թիրախային օրգանիզմների ու շրջակա միջավայրի վրա վտանգավոր հետևանքների:

2.4. ՎՀԿ նախատեսված թունաքիմիկատների, բուսական և այլ բնական ծագման ակտիվ բաղադրիչների կարգավորումները

ՎՀԿ-ն վնասատուների դեմ պայքարի արդյունավետ և էկոլոգիական տեսանկյունից արդարացված մոտեցում է՝ հիմնված պրակտիկ փորձառության վրա: ՎՀԿ ծրագրերը օգտագործում են արդի տեղեկատվություն վնասատուների կյանքի ցիկլերի և շրջակա միջավայրի

հետ նրանց փոխազդեցության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը, համակցված վնասատուների դեմ պայքարի հասանելի մեթոդների հետ, օգտագործվում է վնասատուների պատճառած վնասը հնարավորինս արդյունավետ կառավարելու և բերում է մարդկանց առողջության ու շրջակա միջավայրի համար հնարավոր նվազագույն ռիսկերի [8]:

ՎՀԿ մոտեցումը կարող է կիրառվել ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ ոչ գյուղատնտեսական միջավայրերում, այն հաշվի է առնում վնասատուների դեմ պայքարի բոլոր տարբերակները՝ չսահմանափակելով թունաքիմիկատների խելամիտ օգտագործումը: Օրգանական սննդի արտադրությունը կիրառում է նույն հասկացությունները, ինչ ՎՀԿ-ն, սակայն բացառում է թունաքիմիկատների առկայությունը՝ սահմանափակվելով միայն բնական ծագման միջոցներով:



ՎՀԿ կարևոր գործոններից են վնասատուների դեմ պայքարի կենսաբանական, բնական ծագման, ձևավորված մշակութային և ֆիզիկական միջոցները, որոնք հանգեցնում են գյուղատնտեսական արտադրանքի քանակական աճի, որակական բարելավման և օգտագործողների համար առողջության ռիսկերի նվազման: Ֆերմերների մեծ մասը, ինչպես նաև գյուղատնտեսությունում ինքնազբաղվածները Հայաստանում չեն իրականացնում վնասատուների դեմ պայքարի արդյունավետ գործունեություն և օգտագործում են սահմանափակ ՎՀԿ

գործիքներ: Այս իրավիճակը ծագում է վնասատուների և նրանց դեմ պայքարի միջոցների մասին անբավարար տեղեկատվության, դրանց հասանելիության կամ մշակաբույսերի արտադրության արժեքային շղթայում դրանց գործողությունների հետևանքները վերլուծելու անկարողությունից: Մյուս կողմից, ֆերմերները բախվում են վնասատուների դեմ պայքարի մարտահրավերին՝ կրկնակի վարակման և թունաքիմիկատների նկատմամբ դիմադրողականության զարգացման պատճառով:

Հայտնի են բազմաթիվ բուսական և բնական ծագման նյութեր, որոնք արդյունավետ են վնասատուներին վանելու, կամ ոչնչացնելու համար: Այս բնական միջոցները նախատեսված են համեմատաբար փոքրածավալ օգտագործման համար: Իրավասու գերատեսչությունների և ոլորտային շահագրգիռ կազմակերպությունների կողմից խրախուսման դեպքում հնարավոր է կազմակերպել դրանց որոշ տարատեսակների արտադրությունն ու հետագա օգտագործումը փոքր ֆերմերների կողմից: Ամբողջ ցանկը կարող է օգտագործվել նաև օրգանական և «կանաչ» գյուղատնտեսական արտադրության համար, ըստ միջազգային չափանիշների: ԱՄՆ շրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունը (US EPA) գրանցել է կենսաբանական բաղադրիչների ցանկ՝ բուսական էքստրակտներ, (հիմնականում եթերային յուղեր) որոնք ենթակա չեն պետական գրանցման, ըստ պեստիցիդների գրանցման կանոնակարգերի: Այդ նպատակների համար առաջարկվող բուսայուղերի և էքստրակտների մեծ մասի նկարագրության վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն հասանելի է <http://www.epa.gov/pesticides/reregistration/status.htm> կայքում:

Որոշ բնական պեստիցիդներ արդեն իսկ արտադրվում են, առևտրայնացված են, և արդեն իսկ օգտագործվում են «կանաչ» գյուղատնտեսական արտադրանքով զբաղվող հայաստանյան ֆերմերների կողմից: Որպես միջատասպան (ինսեկտիցիդներ) և սնկասպան (ֆունգիցիդներ) կիրառվում են հետևյալ բուսական և բնական ծագման նյութերը.

**Միջարասպան (ինսեկտիցիդներ)**

Չիլի պղպեղի էքստրակտ, սխտորի էքստրակտ, սոխի էքստրակտ, կաոլին կավային հանքանյութ, բնական ցիտրուսային էքստրակտ (d-limonene), պարաֆինային յուղ, Ծխախոտի (Nicotiana tabacum) բուսաբանական էքստրակտ, պիրետրինի բուսաբանական էքստրակտ, կալիումի հիդրոկարբոնատ, տնտեսական օճառի լուծույթ, ճարպաթթուների կալիումական աղերի խառնուրդ (փափուկ օճառ)

### **Մեկասպան (Ֆունգիցիդներ)**

Կրի և պղնձարջասպի համատեղ լուծույթ (Բորդոյան խառնուրդ), պղնձի սուլֆատ, պղնձի հիդրօքսիդ, պղնձի օքսիքլորիդ, կալցիումի հիդրօքսիդ, ծծումբ, Քվարց ավազ հանքային, Ալոե վերայի էքստրակտ:

Որոշ հայ ֆերմերներ, ներառյալ ջերմոցային և այգեգործական տնտեսությունները, օգտագործում են մի քանի ՎՀԿ կանխարգելիչ գործիքներ, ինչպիսիք են՝ ֆերոմոնային թակարդներ, էլեկտրոնային լույսի թակարդներ, կպչուն դեղին թակարդներ, էտում, կովի գոմաղբի և օրգանական պարարտանյութերի օգտագործում: Բացի այդ կիրառվում են նաև մշակաբույսերի ցանքաշրջանառությունը, նոր ագրոտեխնոլոգիական մշակման մեթոդներ, որոնք ապահովում են սննդանյութերի հավասարակշռված բաշխումը և ջրի օպտիմալ օգտագործումը: Իսկ ջերմոցներում դիմացկուն սորտերի, հիգիենիկ միջոցառումների կիրառումը կարող են կանխել վնասատուների համաճարակային տարածումը:

### **3. Առաջարկվող լուծումներ**

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ վարել ուղղակի և եռակողմ կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում բանակցություններ, որոնք միտված են Հայաստանի Հանրապետության կողմից ԱՄԿ 129-րդ, 184-րդ և 155-րդ կոնվենցիաները վավերացմանը:

Ա. Բանակցությունների ընթացքում պարզաբանել նաև Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված միջազգային պարտավորությունների շրջանակում վարվող սոցիալ տնտեսական քաղաքականության տեսանկյունից վերը թվարկված Կոնվենցիաների անհրաժեշտությունը, սոցիալական, աշխատանքի անվտանգության և հիգիենայի, ինչպես նաև տնտեսական շահավետության, անձանց առողջ սնվելու իրավունքի և հանրային առողջության տեսանկյունից, դիտարկելով այն՝ որպես պետության կողմից ընդունված գերակա շահի քաղաքական օրակարգի բաղադրիչ:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի և Էկոնոմիկայի նախարարությունների հետ ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ ներքին օրենսդրությունը ԱՄԿ 129-րդ, 184-րդ և 155-րդ կոնվենցիաներին համապատասխանեցնելու և կիրարկման մասին փորձագիտական եզրակացություն տալու համար:

3. Փորձագիտական եզրակացության մեջ միջազգային լավագույն փորձը ներառելու համար ներգրավել ԱՄԿ համապատասխան փորձագետների:

4. Կատարել փոփոխություններ ոլորտը կարգավորող հարակից օրենքներում և ընդունել օրենքների պահանջների կիրարկումը ապահովող ենթաօրենսդրական նորմեր

5. Ապահովել համապատասխան մասնագետների ուսուցումը, վերապատրաստությունը և դիտարկել տեխնիկական հագեցվածության խնդիրները և լուծման ուղղությունները, հնարավորությունները:

*Ագրոքիմիկատների չկարգավորված և անվերահսկելի շրջանառության հետևանքով առաջացող առողջական խնդիրների կանխարգելման առաջարկվող միջոցառումներ.*

Մշակել վնասատուների դեմ պայքարի ազգային ծրագիր (ՎՊԱԾ, PMP) կանխարգելիչ գործիքներով և մարտավարությամբ, որոնք կօգնեն նվազեցնել հիմնական մշակաբույսերի վրա վնասատուների և հիվանդությունների ազդեցությունը: Դիմել Միջազգային դոնոր կազմակերպություններին ՀՀ համար ՎՊԱԾ-ների մշակման խնդրով, ապահովելով մասնագիտական գործունեություն ծավալող կազմակերպությունների մասնակցությունը ՎՊԱԾ ծրագրի մշակմանը: Այդ նպատակով կարևորում ենք.

- Խիստ վերահսկողություն սահմանել ՀՀ ներմուծվող, կամ վերագրանցվող օգտագործման թույլատրված հնացած (obsolete, ըստ ԱՀԿ և ՊԳԿ դասակարգման) պեստիցիդների կուտակված պաշարների մոնիտորինգի տվյալներին, իրականացնել պաշարների օգտագործման կանխարգելման ուսուցում:

- Շահագրգիռ գերատեսչությունները և կազմակերպությունները պետք է պարբերաբար իրականացնեն մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում նաև ուսուցում, թունաքիմիկատների մանրաձախ կետերում վաճառվող չափաբաժինների հետ տրամադրվող օգտագործման ձևերի, պահպանման, թունունակության վերաբերյալ տեղեկատվական պիտակի առկայության և բովանդակության վերաբերյալ:

- Իրականացնել օգտագործված տարաների ճիշտ վնասագերծման կամ պահեստավորման վերաբերյալ ուսուցում:

- Վաճառքի կետերում տրամադրել տեղեկատվություն և հստակ հրահանգներ թունաքիմիկատների դատարկ տարաների պատշաճ հեռացման, վերադարձի, կամ վնասագերծման վերաբերյալ:

• Ֆերմերների հետ պարբերաբար իրականացնել ուսուցում վնասատուների համակարգված կառավարման (ՎՀԿ, IPM: Integrated pest management) գործիքների և մարտավարության նորությունների վերաբերյալ՝ բացահայտելու հիմնական վնասատուները յուրաքանչյուր


թիրախային մշակաբույսի համար, գնահատելու և ընտրելու դրանց լավագույն տարբերակները կամ համադրությունը:

- Թունաքիմիկատների կիրառման ժամանակ օգտագործել ԱՊՄ անհատական պաշտպանության միջոցներ: Իրականացնել ուսուցում ժամանակակից ԱՊՄ օգտագործման վերաբերյալ, պարբերաբար թարմացնել սարքերը,

- Դժբախտ դեպքերից խուսափելու նպատակով սահմանափակել մարդկանց մուտքը մշակվող տարածքներ,

- ՎՀԿ մեթոդոլոգիայի ընդլայնման նպատակով հողօգտագործողների համար մշակել և իրականացնել կրթության, վերապատրաստման և ցուցադրական ծրագրեր:

## Առաջարկվող լուծումներ և առաջարկվող միջոցառումներ



## **HEALTH AND OCCUPATIONAL SAFETY ISSUES IN THE FIELD OF AGRICULTURE**

### Experts:

Aram Mikayelyan - PHD in Chemistry, associate professor,  
pesticide quality control specialist

Artashes Nazaretyan - PHD in Chemistry, associate professor  
of ecology

Narek Nersisyan - Lawyer, labor law specialist

## Table of Contents

<b>1. Introduction</b> .....	24
1.1. General Information .....	25
1.2. Main problems with the health and safety in the agriculture sector, the effective legislation .....	26
<b>2. Risks of use of pesticides and agrochemicals and management of such risks</b> .....	30
2.1. Main problems of occupational safety upon use of agrochemicals.....	30
2.2. Classification of chemicals (pesticides) registered and permitted for use in the Republic of Armenia by their level of hazard .....	31
2.3. Analysis of the risks identified in the chains of access to pesticides in agricultural production, their impact on the health of the users from the sector.....	33
2.4. IPM regulation of the of the envisaged chemicals, vegetal and other natural origin active components .....	35
3. Proposed Solutions .....	37
<b>4. References</b> .....	39

## 1. Introduction

